ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. (0253) 6-16-62, 060-80-50-80,
Վեբ-կայք: http://www.odzun.am , Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

*թիվ 32-17*
*18 հունվարի, 2017թ.*

*ՀՀ Լոռու մարզպետ*
*Պարոն Ա. Նալբանդյանին*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կողմից 2017 թվականի հունվարի 13-ին կայացված արտահերթ նիստի ժամանակ ընդունված որոշումները (N 1 և N 2 որոշումները) և Օձուն համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 13-ի N 2 և N 3 և 2017 թվականի հունվարի 18-ի N 4 որոշումները:

Առդիր՝ 7 էջ:

*Հարգանքով*
*Օձուն համայնքի ղեկավար* *Ա. Տիգրանյան*

Կատարող՝ Ն. Վարդանյան
հեռ. 0253-6-16-62

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 հունվարի 2017 թվական, N 1-Ա**

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի չորրորդ և 10-րդ մասերի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13-ի առաջին արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Կողմ (9) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ս. ԱՂԻԿՅԱՆ | | |
| Ա. ԱՊՐԵՍՅԱՆ | | |
| Դ. ԲՈՇՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՁԱՎԱՐՅԱՆ | | |
| Հ. ՉՈԲԱՆՅԱՆ | | |
| Ա. ՏԻՏԱՆՅԱՆ | | |
| Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2016թ., հունվարի 13
Լոռու մարզ, գ. Օձուն,

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 հունվարի 2017 թվական, N 2-Ա**

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ և 6-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել և ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին չորրորդ եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (9) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ս. ԱՂԻԿՅԱՆ | | |
| Ա. ԱՊՐԵՍՅԱՆ | | |
| Դ. ԲՈՇՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՁԱՎԱՐՅԱՆ | | |
| Հ. ՉՈԲԱՆՅԱՆ | | |
| Ա. ՏԻՏԱՆՅԱՆ | | |
| Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2016թ., հունվարի 13
Լոռու մարզ, գ. Օձուն,

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 հունվարի 2017 թվականի, N 2-Ա**

### «ՍԱՐԳԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 12-րդ և 15-րդ հոդվածների, Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 18-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ն որոշման՝

***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի վարչական տարածքում 2017 թվականին հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվություն տալու համար «ՍԱՐԳԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարել, Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 18-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ն որոշման համապատասխան գանձել տեղական տուրք և տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագրերը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում «ՍԱՐԳԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնել հաստատված թույլտվությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2017թ., հունվարի 13
Լոռու մարզ, գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 հունվարի 2017 թվականի, N 3-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 843-Ն որոշման, Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 18-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ն որոշման՝

***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար առևտրային գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ տալու մասին հայտերը բավարարել, Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 18-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ն որոշման համապատասխան գանձել տեղական տուրք և տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագրերը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուներին հանձնել հաստատված թույլտվությունները՝ հայտատուների կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ 2017 թվականի առաջին եռամսյակի համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2017թ., հունվարի 13
Լոռու մարզ, գ. Օձուն

*Հավելված*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավար*
*2017 թվականի հունվարի 1 -ի N13-Ա որոշման*

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Հ/Հ | Հայտատուի անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության տեսակը | Գործունեության հասցեն | Հայտի ներկայացման ամսաթիվը և համարը | Թույլտվության ամսաթիվը և համարը | | Թույլտվության ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ոգելից խմիչքներ | Ծխախոտի արտադրանք | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ա/Ձ Խաչիկ Մարտիրոսյան | 84869732 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N1 | 13.01.2017 N2 | 2017թ. I կիսամյակ |
| 2 | Ա/Ձ Աղասի Հախինյան | 65109358 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N3 | 13.01.2017 N4 | 2017թ. I կիսամյակ |
| 3 | Ա/Ձ Անահիտ Վարոսյան | 66837386 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N5 | 13.01.2017 N6 | 2017թ. I կիսամյակ |
| 4 | Ա/Ձ Ռաֆայել Մուկուչյան | 65106392 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N7 | 13.01.2017 N8 | 2017թ. I կիսամյակ |
| 5 | Ա/Ձ Ֆլորա Ապրեսյան | 65108579 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N9 | 13.01.2017 N10 | 2017թ. I կիսամյակ |
| 6 | Ա/Ձ Մարինե Ձավարյան | 66924011 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N11 | 13.01.2017 N12 | 2017թ. I կիսամյակ |
| 7 | Ա/Ձ Սամվել Ձավարյան | 65118185 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N13 | 13.01.2017 N14 | 2017թ. I կիսամյակ |
| 8 | Ա/Ձ Սիմոն Նալբանդյան | 65108286 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N15 | 13.01.2017 N16 | 2017թ. I կիսամյակ |
| 9 | Ա/Ձ Զավեն Շախկուլյան | 66828378 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N17 | 13.01.2017 N18 | 2017թ. I կիսամյակ |
| 10 | Ա/Ձ Էդուարդ Նոնինյան | 65101287 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N19 | - | 2017թ. I կիսամյակ |
| 11 | Ա/Ձ Սյուզաննա Գաբոյան | 66928417 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N20 | 13.01.2017 N21 | 2017թ. I կիսամյակ |
| 12 | Ա/Ձ Ռոզա Խեչիկյան | 65105168 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N22 | 13.01.2017 N23 | 2017թ. I կիսամյակ |
| 13 | Ա/Ձ Ավետիք Տիտանյան | 65109736 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | - | 13.01.2017 N24 | 2017թ. I կիսամյակ |
| 14 | Ա/Ձ Մանուշ Մնացականյան | 65121705 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N25 | 13.01.2017 N26 | 2017թ. I կիսամյակ |
| 15 | Ա/Ձ Նաիրուհի Խեչումյան | 66924888 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N27 | 13.01.2017 N28 | 2017թ. I կիսամյակ |
| 16 | Ա/Ձ Ռուբիկ Ճարոյան | 65112386 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N29 | 13.01.2017 N30 | 2017թ. I կիսամյակ |
| 17 | Ա/Ձ Անուշ Հովասափյան | 65119747 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N31 | 13.01.2017 N32 | 2017թ. I կիսամյակ |
| 18 | Ա/Ձ Ֆրունզիկ Մնացականյան | 65114056 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N33 | 13.01.2017 N34 | 2017թ. I կիսամյակ |
| 19 | Ա/Ձ Մանուշ Ղազարյան | 65121953 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N35 | 13.01.2017 N36 | 2017թ. I կիսամյակ |
| 20 | Ա/Ձ Ռոմիկ Պետրոսյան | 65121282 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N37 | 13.01.2017 N38 | 2017թ. I կիսամյակ |
| 21 | Ա/Ձ Սիրուն Ձավարյան | 65104269 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N39 | 13.01.2017 N40 | 2017թ. I կիսամյակ |
| 22 | Ա/Ձ Ալինա Ասատրյան | 65119206 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N41 | 13.01.2017 N42 | 2017թ. I կիսամյակ |
| 23 | Ա/Ձ Էդիտա Դալլաքյան | 66918534 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N43 | 13.01.2017 N44 | 2017թ. I կիսամյակ |
| 24 | Ա/Ձ Արմինե Թորոսյան | 65121319 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N45 | 13.01.2017 N46 | 2017թ. I կիսամյակ |
| 25 | Ա/Ձ Ռազմիկ Գորգինյան | 65121018 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N47 | 13.01.2017 N48 | 2017թ. I կիսամյակ |
| 26 | Ա/Ձ Սամվել Բեժանյան | 65103809 | առևտուր | գ.Օձուն | 09.01.2017 | 13.01.2017 N49 | 13.01.2017 N50 | 2017թ. I կիսամյակ |

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

**18 հունվարի 2017 թվականի, N 4-Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՀԱԽԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի, երկրորդ մասի երկրորդ և չորրորդ պարբերությունների, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 116-րդ հոդվածի չորրորդ մասի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի երկրորդ մասի, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի «ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ, ԱՅԳԵՏՆԱԿՆԵՐԻ (ԱՄԱՌԱՆՈՑՆԵՐԻ) ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՆՁԻՆ ԿԱՆԳՆԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ (ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 470-Ն որոշման՝

***որոշում եմ.***

հիմք ընդունելով քաղաքացի Ս. Հախինյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N17092015-06-0004 վկայականը, հողամասի հատակագիծը՝ ինքնակամ կառույցների համապատասխան նշումներով, շենք-շինությունների պարզաբանագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 17/01/2017թ. N Կ-12/01/2017-36-0001 որոշումը՝

1. Օձուն համայնքի 5-րդ փողոցի թիվ 56 հասցեում գտնվող, քաղաքացի Սերինե Սամվելի Հախինյանին սեփականության իրավունքով պատկանող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0127-0003 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.059 հեկտար մակերեսով հողամասում (անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար հողամաս) 2016 թվականին՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, քաղաքացիների կյանքին և առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում չգտնվող և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, ինքնակամ կառուցված **74.15** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության տնտեսական շինությունը՝ **մառանը**, ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար հողամասի սեփականատերը՝ Սերինե Սամվելի Հախինյանը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի բյուջե պետք է մուծի **30 700** (երեսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ **(74.15 քառ. մետր x 414 ՀՀ դրամ (6000x0.069) ՀՀ դրամ = 30 700 ՀՀ դրամ):**

1) Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար սահմանված վճարը հողամասի սեփականատեր Սերինե Սամվելի Հախինյանը պարտավոր է մուծել 60-օրյա ժամկետում:

2) Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60-օրյա ժամկետում, չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Ինքնակամ կառույցի օրինականացումը բավարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 912-Ն որոշմամբ սահմանված օրինականացման պայմանները, ինչպես նաև ինքնակամ կառույցը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

4. Սույն որոշմամբ սահմանված հողամասի և օրինականացվող շինության սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

Նշված հատակագիծը (հատակագծերը) հանդիսանում են սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

5. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 18-ի «ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՀԱԽԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 71-Ա որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2017թ., հունվարի 18**
**Լոռու մարզ, գ. Օձուն**